

Հավելված 1

Հաստատված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի հունիսի 8-ի թիվ 293 Ն որոշմամբ

**ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՍՏԻԱՑՆՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առք ու վաճառքի կանխիկ գործառնություններ իրականացնող մասնագիտացված անձանց կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերը (այսուհետև՝ անդորրագիր) հաճախորդներին տրամադրելու կարգը և ձևը, ինչպես նաև անդորրագրերի նվազագույն վավերապայմանները:

(1-ին կետը փոխ. 17.04.07թ. թիվ 120Ն)

2. Սույն կարգի իմաստով մասնագիտացված անձ են համարվում «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված անձինք՝ բացառությամբ արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնողների:

(2-րդ կետը լրաց. 17.04.07թ. թիվ 120Ն)

3. (3-րդ կետը փոխ. 12.09.06թ. թիվ 536Ն , ուժը կորցրել է 17.04.07թ. թիվ 120 Ն որոշմամբ)

ԳԼՈՒԽ 2. ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐԻ ՆՎԱՁԱԳՈՒՅՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին տրամադրվող արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հաստատող անդորրագիրը առնվազն պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները (տեղեկատվությունը).

ա) մասնագիտացված անձի անվանումը (մասնաճյուղերի կողմից իրականացվող գործարքների դեպքում նաև մասնաճյուղի անվանումը),

բ) մասնագիտացված անձի (մասնաճյուղերի կողմից իրականացվող գործարքների դեպքում՝ մասնաճյուղի) գտնվելու վայրը,

գ) մասնագիտացված անձի արտոնագրի/լիցենզիայի համարը,

դ) հարկ վճարողի հաշվառման համարը,

ե) հերթական համարը,

զ) համակարգչի գրանցման համարը,

է) գործարքի կատարման ամսաթիվը և ժամը,

ը) գործարքի տեսակը («արտարժույթի առք» կամ «արտարժույթի վաճառք»),

թ) գործարքի փոխարժեքը ՀՀ դրամով,

ժ) գնված գումարը (գումարը թվերով և բառերով), արժույթը (արտարժույթի կողմ),

ժա) վաճառված գումարը (գումարը թվերով և բառերով), արժույթը (արտարժույթի կողմ),

ժբ) հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձանց ներկայացուցիչների համար նաև կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը և կազմակերպության դրոշմակնիքը),

ժգ) հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

ժդ) հաճախորդի ստորագրությունը,

ժե) կատարողի/աշխատակցի ստորագրությունը և/կամ մասնագիտացված անձի դրոշմակնիքը:

5. Սույն կարգի 4-րդ կետի «ժբ», «ժգ» և «ժդ» ենթակետերով սահմանված տեղեկատվության առկայությունը անդորրագրերի վրա պարտադիր է չորս հարյուր հազար դրամ գումարը գերազանցող առք ու վաճառքի գործառնությունների համար, իսկ փոխանակման կետերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների դեպքում՝ մեկ հարյուր հազար դրամ գումարը գերազանցող գործառնությունների համար: Ընդ որում սույն կարգի 4-րդ կետի «ժդ» ենթակետի պահանջը կհամարվի բավարարված նաև այն դեպքում, եթե բացակայում է անդորրագրի ձևաթերթիկի «հաճախորդի ստորագրություն» դաշտը, սակայն անդորրագրի վրա առկա է հաճախորդի ստորագրությունը:

(5-րդ կետը փոխ. 12.09.06թ. թիվ 536Ն, փոխ. 12.03.15թ. թիվ 49Ն)

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված վավերապայմաններից բացի մասնագիտացված անձինք կարող են իրենց ներքին ակտերով սահմանել անդորրագրերի լրացուցիչ վավերապայմաններ:

6'. Չի թույլատրվում արժութային գործարքը բաժանել երկու կամ ավելի մասերի՝ սույն կարգով նախատեսված պահանջներից խուսափելու կամ դրանք չկատարելու նպատակով: Արժութային վերահսկողություն իրականացնելու ընթացքում բաժանված գործարքները կարող են դիտարկվել որպես մեկ գործարք:

(6' կետը լրաց. 12.09.06թ. թիվ 536Ն)

Գլուխ 3. ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՈՒՄԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ

7. Մասնագիտացված անձը պարտավոր է հաճախորդին տրամադրել արտարժույթի առք ու վաճառքի յուրաքանչյուր գործարքի կատարման վերաբերյալ անդորրագիր:

8. Անդորրագրերը պետք է կազմվեն էլեկտրոնային եղանակով՝ համակարգիչների կամ հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով: Ընդ որում սույն կարգի 4-րդ կետի «ա», «բ», «գ», «դ», «ե», «զ», «է» ենթակետերով սահմանված տվյալների առկայությունը անդորրագրում մասնագիտացված անձի համակարգչային ծրագիրը կարող է ապահովել ավտոմատ կերպով (ենթակա չէ մուտքագրման արտարժույթի առք ու վաճառքի յուրաքանչյուր գործառնություն իրականացնելիս): Անդորրագրի հերթական համարը, համակարգչի գրանցման համարը, գործարքի կատարման ամսաթիվը և ժամը պետք է ֆիքսվեն համակարգչի կողմից և ենթակա չլինեն փոփոխման:

9. Արտարժույթի առք ու վաճառքի գործարքի փոխարժեքը ՀՀ դրամով կարող է մուտքագրվել համակարգ կամ փոփոխվել միայն մասնագիտացված անձի լիազորված աշխատակցի կողմից, ընդ որում՝ բանկերի, օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և վարկային

կազմակերպությունների դեպքում սույն կետով նշված լիազորված աշխատակիցը չպետք է հանդիսանա հաճախորդին սպասարկող աշխատակից:

10. Արտարժույթի առք ու վաճառքի գործարքը իրականացնելիս մասնագիտացված անձի աշխատակցի կողմից անհրաժեշտ տվյալները մուտքագրվում են համակարգ և այնուհետև անդորրագիրը տպվում է երկու օրինակից:

11. Անդորրագրի մեկ օրինակը պետք է տրամադրվի հաճախորդին:

12. Արտարժույթի առք ու վաճառքի կանխիկ գործառնությունների իրականացման ժամանակ անդորրագրի օրինակը պետք է տրամադրվի հաճախորդին նախքան վաճառված կանխիկի տրամադրումը, կամ առնվազն կանխիկի հետ միաժամանակ:

13. Անդորրագրի երկրորդ օրինակը պահպանվում է լիցենզավորված անձի մոտ թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով՝ լազերային կրիչի վրա՝ 3 տարի ժամկետով՝ բացառությամբ փոխանակման կետերի և արժութային դիլերների: Փոխանակման կետերի և արժութային դիլերների մոտ անդորրագրերի երկրորդ օրինակը պահպանվում է թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով՝ լազերային կրիչի վրա՝ 1 տարի ժամկետով:

(13-րդ կետը [mb. 18.09.07թ. թիվ 295Ն)